

**ՉՈՐԵՔԱԲԹԻ, 14 ՓԵՏՐՎԱՐԻ 2018Թ.**  
№ 4 (462)

# Սյունյաց Երկիր

[www.syuniacyerkir.am](http://www.syuniacyerkir.am)

*Մենք այստեղ պիտի  
ճախրենք ու մնանք,  
Թե մահ կա, այստեղ  
պիտի մահանանք...*

Համո Սահյան



## Արձագանք «Ավրորա» մրցանակա- բաշխությանը

Ռուբեն Վարդանյան, Նուբար Աֆեյան, Վարդան Գրեգորյան եռյակի նախաձեռնած ծրագիրն ավելին, շատ ավելին է, քան մրցանակաբաշխություն ասածը: Սա մեր ազգային անենախոշոր բրենդներից է՝ ուղղված աշխարհին: Նաև սա է այն ճանապարհը, որ մեզ կհասցնի դարերով երազած հանգրվան:

Սա հաղթանակների ճանապարհն է: Սա խելոքության, թույլի, ուզողի, վերջապես պարտվածի հոգեբանություն-խառնվածքի հաղթահարման ուղին է, որից դուրս գալու համար դարեր շարունակ գլուխ էին կտրում մեր ազգի նվիրյալները:

Այս ծրագրով մենք տալիս ենք: Երիցս սխալ են նրանք, ովքեր ասում են.

- Մենք ի՞նչ ունենք, որ տարեկան մեկ միլիոն դոլար՝ դեռ մի քիչ էլ ավելի, ուրիշի տանք: Սա կարճամիտ դատողություն է, ճահճի մեջ վերջնականապես թաղվելու մերժելի արահետ:

Տալը, ուրիշին օգնելը հպարտություն է, հզորություն, գնահատվելու հնարավորություն: «Ավրորան» պետք է դիտել միմիայն այս տեսանկյունից, այնպես, ինչպես հրաշալի եռյակն է տեսնում: Դա ուրիշների համար չէ, այն, նախեստաց, ու հազարապատիկ ավելի մեզ, ապա դիմացինի համար է:

Նա մեզ տանում է դեպի հաղթանակներ, դեպի բարձր արժանապատվություն, դեպի կողքինիդ հետ ունեցածը շոյալորեն կիսելու պատվաբեր ճանաչում: Ուրիշ կերպ չի կարող լինել: Այս ճանապարհի սկիզբն առատ ունենալուց չի սկսվում, ընդհակառակը: Մինչև քիչ կարիքավորին, խելոքին բաժին չհանես, հարուստ ավարից նրան ոչինչ չես տա: Այսպես է ասում նաև ժողովրդական ասացվածքը.

«Չաղ հավը ձու չի ածում»:  
«Ավրորայով» հայտնելով մեր խորին շնորհակալությունը՝ այն դժնդակ օրերին եւ ժամանակներում մեր նկատմամբ աշխարհի ցուցաբերած օգնության ու օժանդակության համար, փորձ ենք անում լուծել հայ ժողովրդի համար մի շատ կարևոր, կենսական, հոգեբանական խնդիր:

Տալը, նվիրելը, օգնելը, օժանդակելը՝ մարդասիրաբար, եւ նման մյուս դրսևորումները դրական զգացողություններ են առաջացնում մարդու մեջ, ուրիշից ուզելը, վերցնելը, խնդրելը՝ անգամ ամենահարազատից, իր մեջ նվաստացում է պարունակում: Իսկ դա անդունդի ուղին է, հատկապես, եթե այն տեսական է լինում: Մենք պետք է աշխատենք ավելի շատ տալ եւ գնալով պակասեցնենք ուզելը, որպեսզի մի երջանիկ օր միայն շոյալորեն բաշխող լինենք՝ իհարկե մեր երկրի ու նրա բնակչության չափանիշներով: Միայն թե հասնենք: Դա կլինի մեր ժողովրդի աստեղային, երջանիկ երազանքի իրականացման պահ: Սրանով չեն ասում, որ մենք թոթափենք նվաստացումը, ուրիշները հայտնվեն այնտեղ: Ոչ եւ հազար անգամ ոչ: Նախ, միտքս այն է, որ մեր երկիրը, ժողովուրդն այնքան ժրջան, արդյունավետ գործի,

## Վալերիկ Քոչարյանին՝ գեներալ-մայորի զինվորական կոչում

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի 2018թ. հունվարի 19-ի հրամանագրով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության չորրորդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Վալերիկ Աշոտի Քոչարյանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է Վալերիկ Քոչարյանին՝ զինվորական բարձր կոչման արժանանալու առիթով, նրան մաղթում ամուր առողջություն եւ հաջողություններ բանակաշինության գործում:

\*\*\*

Գնդապետ Վալերիկ Քոչարյանը ծնվել է 1963թ. մայիսի 17-ին Քաջարան քաղաքում: 1980թ. ավարտել է Կապանի N 2 միջնակարգ դպրոցը, 1984թ.՝ Կիևի զինվորական բարձրագույն ռազմածովային քաղաքական ուսումնարանը, 2005թ.՝ ՌԴ ՁՈՒ համագործակցության ակադեմիան, 2011թ.՝ ՌԴ ՁՈՒ ԳՇ ռազմական ակադեմիան:

Ծառայել է ՀՀ ՊՆ Կապանի զինկոմիսարիատում՝ զինվորական կոմիսար, որտեղ

ծառայության ընթացքում 1992թ. կազմավորվել է ինքնապաշտպանական գումարտակ եւ նրա կազմում մասնակցել Կապան քաղաքի եւ ՀՀ հարավարեւելյան սահմանների պաշտպանությանը:

Ծառայության ընթացքում զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ 66823 զորամասում՝ օպերատիվ կառավարման գծով ավագ սպա, 16396 զորամասի օպերատիվ բաժնի պետ-շտաբի պետի տեղակալ, 60369 եւ 54122 զորամասերի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, ՊԲ 59703 զորամասի հրամանատար, 11556 զորամասի մարտական պատրաստակամության բաժնի պետ: 2004-2005թթ. ընթացքում սովորել է ՌԴ ՁՈՒ համագործակցության ակադեմիայում, որից հետո նշանակվել է 11556 զորամասի հրամանատարի տեղակալ: Ծառայել է նաև 5-րդ բանակային զորամիավորումում՝ շտաբի պետ-հրամանատարի տեղակալի պաշտոնում: 2010-2011թթ. ընթացքում սովորել է ՌԴ ՁՈՒ գլխավոր շտաբի ակադեմիայում: 2011-2014թթ. զբաղեցրել է 27527 զորամասի հրամանատարի տեղակալի պաշտոնը:

2014թ. հունիսի 25-ից 2016թ. հուլիսի 7-ն ընկած ժամանակահատվածում ծառայել է ՀՀ ՊՆ 27527 զորամասի հրամանատարի տեղակալ-շտաբի պետի պաշտոնում: 2016թ. հուլիսի 7-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է 4-րդ բանակային զորամիավորման հրամանատար:

Ամուսնացած է, ունի չորս երեխա:  
Պարգևատրվել է ՀՀ «Մարտական ծառայություն», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին եւ 2-րդ աստիճանի» պետական պարգևներով, «Մարշալ Բաղրամյան-100», «Անդրանիկ Օզանյան», «Վազգեն Սարգսյան», «Անբասիր ծառայություն 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ աստիճանի», «Դրաստամատ Կանայան», «Ծովակալ Իսակով», «Գարեգին Նժդեհ» գերատեսչական մեդալներով, «ՀՀ ՁՈՒ 20 տարի» հոբելյանական մեդալով, «ԵԿՄ հուշամեդալ»-ով, ԼՂՀ «Մայրական երախտագիտություն», հկ-ների «Հայոց արծիվ», «Հաղթանակ», «Սյունյաց արծիվ» մեդալներով:

# Արձագանք «Ավրորա» մրցանակաբաշխությանը

էջ 1  
որ մեր ունեցածը բազմապատկվի և կողքին՝ կարիքավորներին օր-օրի ավելի շատ բան ունենանք տալու: Աշխարհում դառնությունները, սովը, կարիքը մեղմելու ճանապարհը սա է: Մյուս կողմից, եթե ասենք, որ աշխարհի բոլոր երկրները, ժողովուրդները կարճ ժամանակում թող հաղթահա-

թե՞ ոչ: Ցավալի է, բայց գնալով այդպիսիների թիվն աշխարհում շատանում է:  
Չէ՛, «Ավրորան» հսկա մարդասիրական նախագիծ է, հզոր: Արդեն ունենք երկու հաղթող՝ Մարգարիտա Բարանկիցեն և սուդանցի Թոմ Բաբինան: Վերջին օրերին մի հրապարակման մեջ կարդացի, որ «Ավրորայով» Բարանկիցեն



րեն և դուրս գան զարգացման լայն ուղի, ուսուպիա կլինի: Երբ նայում ենք աշխարհում ներկայումս ընթացող զարգացումներին, դրանց մեջ հետընթացն ավելի շատ է: Հզորները, որոնք ամեն կերպ ձգտում են ել ի ցույց են դնում, որ աշխարհն իրենք են կառավարում, վերջնական արդյունքում միայն տեսնում են իրենց բարգավաճումը, իրենց «երազանքի» իրականացումը: Թե աշխարհի այլ անկյուններում ինչ է կատարվում, դա նրանց բոլորովին չի հետաքրքրում:

արդեն օգնություն է արել ավելի քան 300 կարիքավորի: Որ այսպես գնա (հիարկե կասկած չկա), պատկերացնում եք, թե ինչ չափեր է ընդգրկելու մարդասիրական այդ ծրագիրը:  
Տեսե՛ք, աշխարհի բոլոր ծագերից, արդեն համաշխարհային քանի ճանաչված դեմքեր՝ գիտության, արվեստի գործիչներ, հասարակական-քաղաքական դեմքեր, բարերարներ են միանում այս հրաշալի մրցանակաբաշխությանը՝ իրենց նպաստը բերելով նրա էլ ավելի բարձր ու խոր ծավալմանը: Ընդամենը մոտ երեք տարի, ել միլիոնավոր մարդիկ պարզ տեսնում են աշխարհի դեմքին «Ավրորայի» անջնջելի հետքը:

Ինչեւէ, մեզ նման սահմանափակ տարածքի եւ հնարավորությունների երկիրն էլ շատ բան կարող է անել: Կարելի էր բարի կամքն ու ցանկությունն է: Չմոռանանք, «Ավրորան» նախագիծ է, որ մեզ համար տեղ կբացի հզորների, հաղորդների, շնայլ բաշխողների շարքերում, եւ որ ամենակարեւորն է, մոռացության գիրկը կուղարկի մեր միջի ուզողին ու նվաստացողին, անընդհատ ուրիշից սպասողին, խնդրողին, խեղճին: Սա մեր հաղթանակի նախագիծն է:

Թող երիցս օրհնվի Ռուբեն Վարդանյաններ, Նուբար Աֆեյաններ եւ Վարդան Գրեգորյաններ ծնող Հայոց սրբազան արզանը:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐՎԱՆՅԱՆ

# Գորիսի պետական համալսարանում շարունակվում է ինստիտուցիոնալ հավարմագրման գործընթացը

Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախածեռնությամբ եւ նրա կողմից ներկայացված դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում է համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով եւ 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշմամբ (www.anqa.am):

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (ԳՊՀ) դիմել է ՈԱԱԿ՝ 2017թ. ապրիլին ներկայացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտ, բուհի լիցենզիայի եւ դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը, ուսումնասիրելով դիմում-հայտը, դրան կից փաստաթղթերը դիմում-հայտի ընդունման մասին, 2017թ. ապրիլի 10-ին որոշում է կայացրել, որից հետո ՈԱԱԿ-ի եւ ԳՊՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր, կազմվել է հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանված ձևաչափի՝ 2017թ. հունիսին ԳՊՀ-ն ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծությունը հայերեն եւ անգլերեն լեզուներով, ինչպես նաեւ ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Բուհի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ԳՊՀ-ի ներկայից 03 փետրվարի 2017թ. թիվ 59-Ս հրամանով ստեղծված «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 27 անդամներից (աշխատակիցներից) վերաձևավորված 10 հանձնաժողովը՝ համապատասխան 10 չափանիշի գծով:

Գործընթացն ու վերաձևավորված հանձնաժողովների աշխատանքները ղեկավարում է ԳՊՀ ղեկ-

տոր Ա.Ղուկասյանը, համակարգում՝ ԳՊՀ կրթական ծրագրերի եւ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Զ.Գրիգորյանը:

Ուսումնասիրելով «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցը՝ փորձագիտական խումբը ԳՊՀ-ի համաձայնությամբ հաստատել է ԳՊՀ այցելությունների պլանը:

Նոյեմբերի 1-3-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման արտաքին գնահատում իրականացնող փորձագիտական խումբն այցելել է Գորիսի պետական համալսարան: Եռօրյա այցի ընթացքում փոր-

ամփոփելուց հետո ղեկավարներ ամսվա սկզբին ԳՊՀ-ին է ներկայացրել ինստիտուցիոնալ հավատարմագրման նախնական զեկույցը:

Փորձագիտական խումբը, ծանոթանալով ԳՊՀ-ի գործունեությանը, առանձնացրել է բուհի ուժեղ եւ թույլ կողմերը, ներկայացրել բուհի բոլոր ստորաբաժանումների գործունեության դրական ուղղություններն ու դիտարկել առկա բացթողումները: 2018թ. տարեկազմից ԳՊՀ կրթական ծրագրերի եւ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Զ.Գրիգորյանի ու ԿՈԱԿ եւ ՌԿԱԿ բաժնի ղեկավար Ս.Հայրապետյանի անմիջական մասնակցությամբ ար-



ծագիտական խմբի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել ԳՊՀ ղեկավարի, պրոռեկտորի, ինքնավերլուծություն իրականացնող խմբի անդամների, ղեկանների, ամբիոնների վարիչների, ուսանողների, շրջանավարտների եւ գործատուների հետ: Հանդիպումներին հաջորդեցին այցելություններ ֆակուլտետներ, ամբիոններ, ուսումնական եւ վարչական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներ, որտեղ ուսումնասիրվեցին փաստաթղթերը, համապատասխան ռեսուրսները:

Փորձագիտական խմբի անեռոյա գործունեությունն ամփոփվում էր փակ քննարկումներով եւ պահանջված փաստաթղթերի ուսումնասիրությամբ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման արտաքին գնահատում իրականացնող փորձագիտական խումբը եռօրյա ժամկետում իրականացրած ուսումնասիրություններն

դեն ձևավորված ԳՊՀ-ի 10 հանձնաժողովի ներկայացուցիչների հետ պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ, որոնց ընթացքում համապատասխան քննարկումների արդյունքում մշակվում է ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում վերահանված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը՝ ըստ սահմանված ձևաչափի, որը մինչեւ ս.թ. փետրվարի 9-ը կներկայացվի ՈԱԱԿ-ին:

Փետրվար ամսվա ընթացքում կկատարվի թերությունների վերացման ԳՊՀ-ի ծրագրի գնահատում, որի հիման վրա ՈԱԱԿ-ը կկազմի եզրակացություն, իսկ արդեն մարտ ամսին կունենանք ԳՊՀ-ի հավատարմագրման մասին ՈԱԱԿ-ի կայացրած որոշումը:

**ԳՊՀ կրթության որակի ապահովման եւ ուսանողների կարիերայի աջակցման բաժին**

# Մյունիք գյուղի բնակիչները գյուղամթերքի միջոցով սնդիկ, պղինձ ու մոլիբդեն են ուտում

Մյունիքի մարզի որոշ համայնքների բնակիչների, այսպես ասած, առողջական ռիսկը բավականին բարձր է, բանի որ այդ համայնքներում մշտապես օգտագործվող սննդում ծանր մետաղների պարունակությունը գերազանցում է սահմանված շեմը: Այսպիսի եզրահանգման է եկել էկոլոգներին սննդի շղթայի ռիսկերի գնահատ-

ման վերլուծական կենտրոնը, որն ուսումնասիրել է լեռնահանքային շրջաններում աճեցված պտուղ-բանջարեղենում ծանր մետաղների առկայությունն ու դրանց ռիսկերը, գնահատել է բնակչության առողջական ռիսկերը: Կենտրոնի ղեկավար Դավիթ Պիպոյանն «Առավոտի» հետ զրույցում ասաց, որ հետազոտել են Մյունիքի մարզի որոշ համայնքներ,

առայած լիարժեք ամփոփել են Մյունիք գյուղի հետազոտության տվյալները: Իսկ Մյունիք գյուղին մոտ է գտնվում Արծվանիկի պղնձաբարը: Այս պղնձաբարը, ըստ Համահայկական բնապահպանական ծակատի, աշխարհի ամենամեծ պղնձաբարներից է, այն գտնվում է Արծվանիկ գետի կիրճում, լցված է մոտ 300 միլիոն տոննա թունավոր զանգվածով: Այստեղ են լցվում Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայի պղնձաքարերը: «Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ Մյունիք գյուղի բնակիչները տեղում արտադրած մթերքներն են օգտագործում: Իսկ Կապան քաղաքի բնակիչները,

օրինակ, եւս ունեն տնամերձներ, բայց նաեւ շուկաներից են օգտվում, իսկ այդ շուկաներ են բերվում ոչ միայն լեռնահանքային շրջաններում աճեցված մթերքներ, այլեւ ոչ լեռնահանքային շրջաններից՝ Սիսիանից, Գորիսից, որտեղ ծանր մետաղներով աղտոտվածություն չկա: Ուստի պատկերը ստացվեց այնպես, որ գյուղական համայնքներում առողջական ռիսկը մի քանի անգամ բարձր է, քան քաղաքային շրջաններում», - ասաց Պիպոյանը: Պիպոյանի խոսքով՝ հետազոտություններն իրականացվել են պտուղ-բանջարեղենի սպառման առումով, սա գիտական 2 բա-

ցատրություն ունի. «Ինչո՞ւ ենք պտուղ-բանջարեղեն, որովհետեւ Մյունիքի գյուղական համայնքներում եւ ընդհանրապես գյուղական համայնքներում պտուղ-բանջարեղենը, որոնք, այսպես ասած, ծանր մետաղների մետաղաբար են համարվում, մեծ քանակությամբ են օգտագործում: Այսինքն՝ գյուղական համայնքների բնակիչների սննդակարգը դիտարկելով՝ կարող ենք ասել, որ կենդանական ծագման մթերքներ շատ քիչ են օգտագործում, նրանց սննդակարգում 70-80% մասնաբաժին ունի հենց պտուղ-բանջարեղենը: Սա

# Ի՞նչ է տեղի ունեցել Այունիքի միջնակարգում

Յոգեւոր-մշակութային-կրթական Այունիքն ամայացնելու եւ փոխարենը Այունիք-արտավայր ստեղծելու վահեհակոբյանական ծրագրի իրականացման գլխավոր թիրախն ի սկզբանէ մարզի մտավորականությունն էր:

Նա հաջողեց բազում երեւելի մտավորականների վարկաբեկել, պաշտոնանկ անել, ասպարեզից հեռացնել...

Գերթական թիրախը Այունիքի գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանն է:

Ո՞վ է Լիլիթ Առաքելյանը եւ ինչո՞ւ է անցանկալի անձ հայտարարվել մարզպետի կողմից:

Ըստ կրթության ոլորտի մի շարք մասնագետների Լիլիթ Առաքելյանը մարզի հանրակրթական դպրոցների լավագույն տնօրեններից է եւ աչքի է ընկնում դպրոցական գործի անմրցելի իմացությամբ, կազմակերպչական կարողություններով, գործարարությամբ եւ բարոյական վեհ հատկանիշներով: Պաշտոնավարման մոտ մեկուկես տարվա ընթացքում պետքի էր հատկացումներից բացի կարողացել է նկատելի ներդրումներ բերել դպրոց եւ ուշագործ քարեփոխումներ կատարել այնտեղ: Մեծ սեր ու հարգանք է վայելում դպրոցականների ու մանկավարժների, ծնողների ու առհասարակ կապանյան հասարակության շրջանում: Հանրակրթության իսկական կազմակերպիչ է, ստեղծագործող մտավորական, գիտական մի շարք հոդվածների հեղինակ եւ հարգված ու ճանաչված ընտանիքի դուստր: Եղել է «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի 2012թ. հաղթող, Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի պատմության եւ հասարակագիտության մասնագետ ու վերապատրաստող ուսուցիչ, 1-ին աստիճանի տարակարգված ուսուցիչ:

Մինչդեռ հանրակրթական դպրոցի լավ տնօրենի վերաբերյալ մարզպետն ունի իր սեփական պատկերացումները, որոնցով եւ աղավաղում է մարզի կրթական համակարգը:

... Նոր տարվա առաջին օրերին մարզպետի հետախույզները «բացահայտել» ու մարզպետին տեղեկացրել են, որ Լիլիթ Առաքելյանը «հանցավոր» գործունեությամբ է զբաղվում. վերջին տարիներին մի քանի հոդված է հեղինակել «Այունյաց երկրում», անգամ թերթ է բաժանորդագրվել...

Մարզպետն ամնիջապես կարգադրել է ստուգում սկսել Այունիք գյուղի միջնակարգ դպրոցում, որի տնօրենն է Լիլիթ Առաքելյանը:

Ստուգումը դեռ չէր ավարտվել, երբ տնօրենը փորձեց մարզպետի հետ քննարկել ինչ-ինչ հարցեր, տեղեկացնել նրան միջնակարգ տնօրենի նախաձեռնության մասին բացահայտված որոշ թերությունների մասին:

Մեծ դժվարությամբ նա ընդունելության թույլտվություն ստացավ հունվարի 18-ին: Մարզպետն ինկվիզիցիայի ժամանակներին բնորոշ պահվածքով եւ արտահայտություններով դիմավորեց Լիլիթ Առաքելյանին՝ քո մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ եմ հավաքել, դու «Այունյաց երկիր» թերթում հոդվածներ ես հեղինակել...

Եվ տնօրենին խոսելու-պատասխանելու հնարավորություն չստացավ պահանջել է դուրս գալ ու աշխատանքից ազատվելու դիմում գրել:

Իրադարձությունների հետագա ընթացքը ներկայացնելուց առաջ փորձեց հիշել, թե

ինչ հոդվածներ է հեղինակել Լիլիթ Առաքելյանը «Այունյաց երկրում», որի մասին հիշեցրել է մարզպետը:

\*\*\*

Իսկապես, ի՞նչ հոդվածներ է հեղինակել Լիլիթ Առաքելյանը «Այունյաց երկիր» թերթում: Սհա՛

1. Երիտթուրքական շարժումը (N10, 2015թ.),

2. Մովսես Տաթևացու ժամանակը (N23, 2015թ.),

3. 1720-ական թվականների Այունյաց իշխանապետությունը (N27, 2016թ.),

4. Արիստոտելի մերօրյա շառավիղն էր նա. Ռոբերտ Էջաննցու մասին (N37, 2016թ.),

5. Նա իր մեջ կրում է հայ ժողովրդի եւ հատկապես այունեցու հայրենասեր ոգին (հոդվածը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասին է), (N15, 2017թ.):

Հետաքրքիր է, այս հոդվածներից ո՞ր մեկն է գայրացրել Վահե մարզպետին՝ հայ ազգային-եկեղեցական վերջին սուրբ Մովսես Խոտանանցու մասին գրվածը, Դավիթ Բեկի մասին:



սին, թե՞ Սերժ Սարգսյանի: Իսկ միգուցե մարզպետին դուր չի եկել, որ Լիլիթ Առաքելյանը Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առիթով դատախազ է երիտթուրքական շարժումը:

Իմիջիայլոց, նշված հոդվածները հրապարակվել են նաեւ հանրապետության գիտական ամսագրերում, հանդեսներում:

\*\*\*

Հիմա այն մասին, թե ինչ իրադարձություններ հաջորդեցին դպրոցի տնօրեն-մարզպետ հանդիպմանը:

2018թ. հունվարի 19-ին Այունիքի մարզպետի խորհրդակցական Ռոբերտ Հայրապետյանի սենյակում Լիլիթ Առաքելյանը հոգեբանական ճնշումների հետեւանքով եւ հարկադրաբար գրել է դիմում աշխատանքից ազատվելու մասին՝ առանց ժամկետ նշելու: Դիմումը մարզպետարանի կարգերի բաժնում պաշտոնապես մուտքագրվել է հունվարի 22-ին: Մեկ օր անց, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի հայտնի դրույթներով, Լիլիթ Առաքելյանը գրել է երկրորդ դիմումը եւ հրաժարվել առաջին դիմումից՝ հանձնելով այն նույն Ռոբերտ Հայրապետյանին:

Եվ այդ ամենից հետո, շրջանցելով Հայաս-

տանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջները, հունվարի 23-ին Վահե մարզպետը կարգադրություն է ստորագրել Լիլիթ Առաքելյանին դպրոցի տնօրենի պաշտակալություններից ազատելու վերաբերյալ:

Տեղի ունեցածի մասին հունվարի 24-ին դպրոցի տնօրենը տեղյակ է պահել ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին:

Բողոքի ձայն է բարձրացրել դպրոցի մանկավարժական կոլեկտիվը՝ մոտ 30 հոգու ստորագրությամբ դիմում հղելով երկրի վարչապետին:

\*\*\*

Փորձեց հայացք ձգել մարզպետի 2018թ. հունվարի 23-ի N17-Ա կարգադրությանը, որով լուծվել է Լիլիթ Առաքելյանի աշխատանքային պայմանագիրը:

Մենք մի առիթով ասել ենք, որ մարզպետարանում հիմա մի խումբ երեւանցի կիսագրագետների թագավորություն է, անգամ սահմանադրությունից են քաղվածքներ բերում աչքաչափով:

Մարզպետի նշված կարգադրությունը, թույլ տվեք ասել, իրավական անհեթեթության բացառիկ ու անկրկնելի հուշարձան է:

Պարզապես մի հանգամանք հիշեցնեմք ընթերցողին՝ իհարկե, կարելի է եւ դպրոցի տնօրենին աշխատանքից ազատել: Բայց տնօրենին աշխատանքից ազատելու համար առնվազն մեկ հիմք պետք է լինի ՀՀ աշխատանքային օրենսգրքից կամ ՊՈԱԿ-ի մասին օրենքից կամ տվյալ տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագրից, որի մեջ մանրամասն նշված են պայմանագրի լուծման հնարավոր հիմքերը: Եթե որեւէ հիմք նշված օրենքներից կամ աշխատանքային պայմանագրից չկա, ապա տվյալ կարգադրությունն առ ոչինչ է:

Իսկ մարզպետն այսպես է կառուցել իր կարգադրությունը՝ «Լիլիթ Առաքելյանին 2018թ. հունվարի 23-ից ազատել «Այունիքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016թ. հոկտեմբերի 10-ին նրա հետ կնքված N8 աշխատանքային պայմանագիրը»:

Հիմա հարց աշխարհի բոլոր տառաճանաչ մարդկանց՝ ինչի՞ համար է ազատվել Լիլիթ Առաքելյանը, Հայաստանի ո՞ր օրենքի, օրենքի ո՞ր հոդվածի կամ աշխատանքային պայմանագրի ո՞ր մի կետի համաձայն է լուծվել տնօրենի հետ կնքված պայմանագիրը: Որեւէ օրենքի որեւէ հոդվածի վկայակոչում չկա: Իսկ դա նշանակում է, որ Լիլիթ Առաքելյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չի լուծվում:

Իսկ ինչո՞վ է ղեկավարվել մարզպետը նման կարգադրություն ստորագրելիս. իրավական շատ կարեւոր հարց է դա:

Ղեկավարվել է (ինչպես գրված է կարգադրության սկզբնամասում) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածով եւ ՀՀ նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՅ-728 հրամանագրի 1.6-րդ եւ 1.9-րդ կետերով:

Ընթերցողին խնդրում ենք բացել եւ ծանո-

թանալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 110-ին. մարզպետը ոչ միայն շրջանցել է այդ հոդվածը, այլեւ ուղղակիորեն հաստատել է, որ Լիլիթ Առաքելյանը շարունակում է գլխավորել «Այունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, որ նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չի լուծվում:

Խնդրում ենք բացել եւ ընթերցել ՀՀ նախագահի վերոնշյալ հրամանագրի 1.6-րդ կետը. ընդամենը մարզպետին կարգադրություններ տալու իրավունք է վերապահվում, բայց չի լիազորում գործող օրենքներին հակասող կարգադրություն անել, այսինքն՝ եթե մարդուն ազատում ես աշխատանքից, ապա բարի եղիր ասել՝ ինչու:

Ընթերցեք ՀՀ նախագահի վերոնշյալ հրամանագրի 1.9-րդ կետը. մի անմեղ, բայց եւ հստակ ձեւակերպում «Մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով պաշտոնի է նշանակում եւ պաշտոնից ազատում մարզպետը»: Տեսե՛ք՝ «օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով»: Հարց. մարզպետի կարգադրության մեջ ո՞ր է օրենքով նախատեսված դեպքը, ո՞ր կարգով է գործել մարզպետը, երբ կարգադրություն է ստորագրել: Ոչ մի նշում այդ մասին...

Լիլիթ Առաքելյանը մարզպետի օրինախախտության մասին տեղյակ է պահել (գրավոր դիմումով) ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին (25 հունվարի 2018թ.):

Այդ ամենից հետո Լիլիթ Առաքելյանը որոշել է դատական հայցով մտնել Այունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ մարզպետի կարգադրությունը չեղարկելու եւ այս օրերին իրեն հասցված բարոյական վնասը հատուցելու համար:

Մինչ այդ՝ հունվարի 30-ին, մարզպետարանից հանձնախումբ է ժամանել Այունիքի միջնակարգ դպրոց՝ հանձնում-ընդունում կատարելու համար:

Լիլիթ Առաքելյանը հանձնախմբից պահանջել է ցույց տալ գործող օրենսդրության այն դրույթը, որի համաձայն լուծվում է իր աշխատանքային պայմանագիրը: Սկիզբ առած լարված բանավեճում, նաեւ վերջին օրերի լարվածության հետեւանքով, հանկարծակի վատացել է Լիլիթ Առաքելյանի առողջական վիճակը եւ նրան տեղափոխել են Կապանի հիվանդանոց:

Այդ իրավիճակում Լիլիթ Առաքելյանի փաստաբան Արշավիր Խալափյանն անթույլատրելի է համարել գրեթե անգիտակցության մեջ հայտնված տնօրենի կողմից որեւէ փաստաթղթի ստորագրում...

Սհա թե ինչ հետեւանք կարող ունենալ մարզպետ կոչվածի արկածախնդրությունը: Հ.Գ.

Վահե-Էլիզաբեթ ընտանեկան լրատվամիջոցներից մեկն օրերս իբր ներկայացրել է Այունիքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցածը՝ «մոռանալով» նշել, որ Լիլիթ Առաքելյանը երկրորդ դիմումով առաջին դիմումը հետ է վերցրել:

ՍԱՍԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

## «Մեղրի» ԱՏԳ ծրագրի իրականացման երկրորդ փուլի աշխատանքներին նվիրված քննարկում

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունում հունվարի 30-ին տեղի է ունեցել «Մեղրի» ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) ծրագրի իրականացման երկրորդ փուլի աշխատանքներին նվիրված քննարկում, որը վարել է նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյանը:

Քննարկմանը մասնակցել են նախարարության ներդրումների ներգրավման եւ համակարգման վարչության, «Հայաստանի զարգացման եւ ներդրումների կորպորացիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ, «Ավենյու քրենսալթինգ գրուպ» ՄՊԸ (Avenue Consulting Group) եւ «Մեղրի» ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ ներկայացուցիչները:

«Մեղրի» ԱՏԳ կառուցապատման երկրորդ փուլի գործարար ծրագիրը, որով նախատեսվում է ազատ տնտեսական գոտու գործունեության, ենթակառուցվածքների եւ տարածքի ընդլայնում՝ ներդրողների համար շահույթաբեր բիզնես ծավալելու նախապայմաններ ստեղծելու նպատակով: Քննարկվել են ծրագրին առնչվող մի շարք առաջարկներ, նախանշվել են համագործակցության հետագա ուղղությունները եւ հանդիպումների ժամանակացույցը:

mineconomy.am  
31 հունվարի 2018թ.



# Մարզպետի հրահանգով Սյունիքի ոստիկանները գործեր են հորինում «Սյունյաց երկրի» դեմ

Ընթերցողին արդեն տեղյակ ենք դարձրել, որ վերջին շրջանում մարզպետի պատվերով եւ Սյունիքի ոստիկանության ջանքերով ինչ քայլեր են ձեռնարկվում «Սյունյաց երկրի» ու նրա խմբագրի դեմ: Արդյունքում քրեական գործեր են հարուցվել...

Թերթի գործունեության տասնհինգ տարվա ընթացքում ոչինչ չենք թաքցրել ընթերցողից՝ առաջնորդվելով լիակատար թափանցիկության սկզբունքով: Այժմ նույնպես հավատարիմ ենք այդ գործելակերպին՝ ոչինչ չթաքցնել, քանզի ընթերցողի դատից վեր ուրիշ դատ չկա:

Ուստի եւ ներկայացնում ենք հարուցված քրեական գործերի հիմնական հանգամանքները:

Այսօր առաջին գործի մաս

\*\*\*

Եվ այսպես՝ Կապանի ոստիկանությունը հարուցել է քրեական գործ 33 քրեական օրենսգրքի հոդված 182-ի 1-ին մասի հատկանիշներով շորթուն:

Գործի փաստական հանգամանքներին եւ իրավական առանձնահատկություններին անդրադառնալուց առաջ տեղյակ պահենք՝ ոստիկանության Կապանի եւ Գործի բաժիններ հաղորդումներ են ներկայացրել Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Լուսինե Չաքարյանը, Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն Արթուր Մևացականյանը, Գործի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Սիրուշ Ավուրյանը, Գործի բնակիչ Գարիկ Կարապետյանը:

Ավելի վաղ ասել էինք, որ մարզպետարանի կրթության վարչության պետի տեղապահ Մերի Գանդալյանը զանգահարում է դպրոցների տնօրեններին՝ ճշտում խմբագրությունից զանգահարել են թերթի համար, թե՞ ոչ, կարո՞ղ եք իրավապահներին հաղորդում տալ, թե՞ ոչ: Ավելի ուշ այդ գործին մեկ էպիզոդով միացել է նաեւ Գործի համայնքապետարանը:

Կկարողանա՞մ մարզպետարանն ու Գործի համայնքապետարանը նոր դիմումատուներ հավաքագրել, թե՞ ոչ, հարցի պատասխանը ժամանակը կտա:

Բողոքաբեր Գարիկ Կարապետյանի եւ նրա դիմումի մասին քիչ հետո, իսկ հիմա դպրոցի տնօրենների հաղորդումների մասին:

Ի՞նչ են գրում դիմումատուները ոստիկանություն ներկայացված հաղորդումներում. ի դեպ, բոլոր դիմումների տեքստերը գրեթե նույնն են՝ կարծեք գրված լինի մեկի կողմից:

Գրում են՝ իբր խմբագրության հաշվապահ Գայանե Բաղդասարյանը զանգահարել է իրենց՝ ասելով, եթե թերթ չբաժանորդագրվեք, ապա թերթում ձեր մասին վարկաբեկող տեղեկություններ կհրատարակվեն:

Ընդ որում ասվածը հիմնավորող, հավաստող ոչ մի փաստ կամ ապացույց, միայն մերկապարանոց նախադասություն:

Այդ ամենից հետո, բնականաբար, բազում հարցեր են առաջ գալիս, որոնցից մի քանիսը կուզե՞նայինք հրապարակված քննության առնել:

**Չարք 1. կարո՞ղ էր հաշվապահը թերթի բաժանորդագրության (իրացման) հարցով զանգահարել**

### մարդկանց:

Իհարկե կարող էր: Եվ նույնիսկ պարտավոր էր. թերթի բաժանորդագրության (իրացման) կազմակերպումը նրա պաշտոնական պարտականություններից մեկն է: Ավելին, նա կարող էր զանգահարել հարյուրավոր քաղաքացիների (ինչպես եւ արել է ու անելու է այսուհետ), հանդիպել շատերի հետ, գրություններ ուղարկել՝ առաջարկելով «Սյունյաց երկիր» թերթ եւ ոչ թե գումար խնդրել:

«Սյունյաց երկիրը» ինքնաֆինանսավորվող լրատվամիջոց է եւ իր գործունեությունը կազմակերպում է բաժանորդագրությունից, հատվածաճառից, գովազդային ծառայությունից ու հատուկ թողարկումներից, նաեւ հովանավորներից ստացված գումարների, ինչպես եւ հիմնադրի ներդրումների հաշվին:

Եվ ինչպես աշխարհի բոլոր թերթերը, այնպես էլ «Սյունյաց երկիրը», ամեն տարվա ավարտին իրականացնում է բաժանորդագրություն (իրացման ծրագրավորում) հաջորդ տարվա համար, ուրվագծում մյուս անելիքները:

### Չարք 2. հաշվապահը սպառնացե՞լ է բողոքաբերներին, թե՞ ոչ:

Իհարկե ոչ: Որեւէ փաստ կամ ապացույց այդ առումով դիմումատուները չեն նշում: Ինչպես քիչ առաջ ասացինք՝ միայն մերկապարանոց մեկ-երկու նախադասություն:

### Չարք 3. կարո՞ղ էր, ի վիճակի՞ է, ընդունա՞լ է Գայանե Բաղդասարյանը որեւէ մեկի հետ խոսել սպառնալիքի լեզվով:

Բացառվում է...

Նախ՝ խմբագրությունը հանդես է գալիս իր արտադրանքն իրացնողի դեմ: Եվ անտրամաբանական կլինի, որ սեփական արտադրանքն իրացնող-վաճառողը պոտենցիալ գնորդին սպառնալիքներ ուղղի:

Մյուս կողմից՝ Գայանե Բաղդասարյանն աշխատում է խմբագրության մի սեյնակում, որտեղ եւս չորս-հինգ հոգի են աշխատում: Փոքրիկ սեյնակում յուրաքանչյուրի խոսակցությունը լսելի է: Եվ որեւէ մեկը նրանցից երբեք հաշվապահից չի լսել ոչ միայն սպառնալիք, այլեւ ձայնի բարձրացում. միայն խնդրանք եւ ոչ նույնիսկ առաջարկություն: Անգամ մերժողների հետ խոսակցությունն ավարտում է «շնորհակալություն» կամ «ներեցեք անհանգստացնելու համար» արտահայտություններով:

Իրացման խնդիրներով եւ առհասարակ իր պարտականություններով հաշվապահը զբաղվում է աշխատանքային օրվա եւ աշխատանքային ժամերի ընթացքում: Այնպես որ խմբագրության աշխատողները սովորաբար եւ ակամա լսում են նրա խոսակցությունները, ինչպես եւ ինքը լսում է նրանց խոսակցությունները:

Մի հանգամանք էլ կա՝ Գայանե Բաղդասարյանին ճանաչում է գրեթե ամբողջ Կապանը, նա բարձր կուլտուրայի տեր, առաքինի եւ բարեհամբավ կնոջ համարում ունի: Ու եթե նույնիսկ շատ կամեմա ու շատ ջանքեր գործադրի, ապա չի կարող որեւէ մեկին վիրավորել, սառը խոսք ասել, առավել եւս սպառնալ: Ընդհակառակը, դատապարտում է բոլոր նրանց, ովքեր մարդկային շփումներում, աշխատանքում չեն իր

կոպտություն եւ ոչ պատշաճ վերաբերմունք ենք դրսևորում:

Չարյուրավոր ընթերցողներ, քաղաքացիներ տասնհինգ տարի շարունակ հաճույքով են համագործակցում բարձր կուլտուրայի տեր այդ անձնավորության հետ:

### Չարք 4. նշված դիմումատուները, այդ ամենով հանդերձ, բաժանորդագրվե՞լ են «Սյունյաց երկիր» 2018-ի համար:

Ոչ ոք նրանցից թերթ չի բաժանորդագրվել:

### Չարք 5. թերթ չբաժանորդագրվելուց հետո նրանց մասին որեւէ նախադասություն կամ բառ կամ արտահայտություն (բացասական իմաստով) հնչե՞լ է թերթի կամ կայքի էջերում:

Ոչ:

Սիրուշ Ավուրյանը, օրինակ, 2009 թվականից ի վեր «Սյունյաց երկիր» չի բաժանորդագրվել, եւ ութ տարվա ընթացքում նրա մասին բացասական որեւէ նախադասություն չի



գրվել:

### Չարք 6. ի՞նչ արտավարող տեղեկությունների մասին կարող էր խոսք լինել առհասարակ:

Դիմումատուները բառ անգամ չեն ասում հնարավոր արտավարող տեղեկությունների մասին:

Մենք նույնպես չունենք նրանց վերաբերյալ արտավարող տեղեկություններ:

33 քրեական օրենսգրքի հոդված 182-ի մեկնաբանություններում, մինչդեռ, ենթադրվում է արտավարող տեղեկությունների մի ամբողջ շրջանակ՝ հանցագործության մեղսագրում, հիվանդություն, հոգեկան կամ ֆիզիկական արատ ունենալու մասին տեղեկություն եւ այլն:

Որքանով տեղյակ ենք՝ նշված տնօրեններից եւ ոչ մեկին հանցագործություն չի մեղսագրվում, նրանք հիվանդ չեն եւ հոգեկան ու ֆիզիկական արատներ չունեն:

Միգուցե նման խնդիրներ նրանք ունեն եւ վախեցել են, որ կբացահայտվի, կհանրայնացվի, բայց մենք նման տեղեկությունների առայժմ չենք տիրապետում:

\*\*\*

Իրավական բնույթի որոշ հարցեր արդեն իսկ արծարծեցինք, փորձենք հայացք ձգել 33 քրեական օրենսգրքի հոդված 182-ի սկզբունքային մի քանի առանձնահատկությունների վրա:

Շորթման սուբյեկտիվ կողմը,

ըստ գործող օրենքի, բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Ասել է թե՛ պոտենցիալ հանցավորը գիտակցում է իր պահանջի անօրինակամտությունը, ինչի համար էլ սպառնալիք է տալիս:

Այս դեպքում դիտավորության մասին խոսք լինել չի կարող, քանի որ թերթը տարածելու մեր իրավունքը խիստ օրինական է:

Առհասարակ, թերթերի, ամսագրերի տարածումը (հատվածաճառով, անվճար բաժանելով, համացանցով տարածելով, բաժանորդագրությամբ) օրինական գործունեություն է. այդ նպատակով տարբեր տեսակի տեղեկագրեր են հրատարակվում, հայտարարություններ են արվում, գովազդային հոլովակներ են սփռվում, սոցցանցերով նյութեր տարածվում եւ այլն:

Մենք էլ իրականացնում ենք նման գործեր պարբերականի տպագիր օրինակի տարածման համար: Այդպես եղել է մինչեւ հիմա, այդպես կլինի այսուհետ:

Այնպես որ՝ թերթի տպագիր օրինակի տարածման համար դիմում ենք հարյուրավոր ու հազարավոր մարդկանց, տնտեսվարողների, ինչների, պետական կառույցների...

Իրավական մեկ այլ եւ վճռորոշ հանգամանք, շորթունը շահադիտա-

մշակույթի նախարարություն ներկայացրած փաստաթղթերով, երբ քննարկվում էր անկախ պարբերականներին ցույց տրվող պետական աջակցության խնդիրը: Ընդ որում՝ պետական աջակցության գումար է նախատեսվել հինգ հարյուր հազար դրամ: Այնպես որ՝ շահույթ ստանալու մասին առայժմ խոսք չկա: 36-տեւաբար՝ 10 հազար դրամի դիմաց թերթը չէր կարող շահույթ ակնկալել, չէր կարող ուրիշի հաշվին հարստանալու խնդիր ունենալ, մանավանդ որ (եթե այդ գումարը փոխանցվեր) գումարը չէր փոխանցվելու Գայանե Բաղդասարյանին, այլ հիմնադիր ՄՊԸ-ին:

Եվս մեկ իրավական հանգամանք. այս դեպքում շորթման առարկան պետք է հանդիսանար գույքային բնույթի ինչ-որ գործողություն (ծառայության մատուցում):

Մինչդեռ, խմբագրությունը ոչ թե գումար է խնդրել, այլ ապրանք է առաջարկել, ծառայություն է առաջարկել՝ «Սյունյաց երկիր» թերթի տպագիր օրինակ ամբողջ տարվա համար՝ ավելի քան 30 թողարկման հաշվով: Այսինքն՝ տվյալ մարդուն առաջարկվում է ապրանք (ծառայություն), որի համար, բնականաբար, պիտի վճարի, ինչպես դա արվում է առավանձառքի բոլոր գործողություններում ու աշխարհի բոլոր ծագրերում:

Իսկ դա նշանակում է, որ ստեղծված վիճակում բացակայում է շորթման առարկան:

\*\*\*

Մենք խոստացել էինք առանձին անդրադարձ կատարել բողոքաբեր Գարիկ Կարապետյանին ու նրա բողոքի ելույթանը:

Ո՞վ է Գարիկ Կարապետյանը:

Մեծ դժվարությամբ ճշտեցինք նրա ով լինելը, Գործիսում նրան գրեթե ոչ ոք չէր ճանաչում: Մի մասն ասում էր՝ քաղաքի աղբը հավաքող տղերքից է, մյուս մասն էլ՝ թե՛ հիվանդ տղա է, քաղաքում չի երևում: 36-տարեկանը, որ Գործիսի կոմունալ տնտեսության հիմքի վրա մեկ տարի առաջ ձեւավորված «Բնակարանային տնտեսություն եւ բարեկարգում» 3ՈԱԿ-ի հաշվապահն է:

2018թ. բաժանորդագրության ընթացքում ինչ առնչություն է ունեցել թերթի հետ:

Ոչ մի առնչություն, նրա հեռախոսահամարը թերթի հաշվապահին տվել է կազմակերպության տնօրեն Վահագն Միքայելյանը՝ 3ՈԱԿ-ի հարկային կողմ վերցնելու համար. մնացած բոլոր հարցերը համագործակցության համար, մինչ այդ պայմանավորված ենք եղել տնօրենի հետ:

Այդ ամենից հետո հաշվապահը զանգահարել եւ տնօրենի ասածի հիման վրա խոսել է Գարիկ Կարապետյանի հետ ու նրանից վերցրել հարկային կողմ՝ էլեկտրոնային հաշիվ ուղարկելու համար:

Այսքանը...

Ասկայն թերթի երկրորդ համարից հետո զանգահարել են Գործիսի փոստից եւ տեղեկացրել, որ այդ կազմակերպությունը հրաժարվում է վերցնել թերթը: Մենք էլ դադարեցրել ենք (առանց որեւէ խոսքի) թերթի առաքումը:

Գարիկ Կարապետյանի բողոքն ի հայտ գալուց հետո Վահագն Միքայելյանը տեղեկացրել է, որ ինքը տեղյակ չէ իր հաշվապահի գործողություններից, որ ինքը որեւէ խնդիր չունի թերթի հետ, որ թերթի նախապես պայմանավորված հինգ օրինակից հրաժարվելու մասին առաջին անգամ է լսում:

Ինչպես տեսնում եք, բոլորովին այլ վիճակ է. նախ՝



# Ճանաչեք եւ զգուշացեք. նրանք են մարզպետի գործածմամբ կեղծ գործ տվել ընդդեմ «Այունյաց երկրի»

Ընթերցողին արդեն տեղյակ ենք պահել, որ Այունյաց երկրի մարզպետը մարզում կանանց գործառնալը է սկսել «Այունյաց երկիր» թերթի

ու նրա խմբագրի դեմ կեղծ հաղորդումներ եւ ցուցմունքներ տալու համար:

Այդ ցուցմունքներից յուրաքան-

չյուրի շուկայական գներին մենք կանգնադրադառնանք:

Հիմա պարզապես հիշեցնենք, թե ովքեր են հաղորդում տվել Այունյաց երկրի մարզի ոստիկաններին թերթի

ու նրա խմբագրի մասին. մնում է գլխավորը տրված հաղորդումների ապացուցումը, այլապես պետք է պատրաստ լինեն սուտ մատնու-

թյան համար պատասխանատվության (առայած չենք կարողանում գտնել միայն Գարիկ Կարապետյանի լուսանկարը, որին, այնուամենայնիվ, չեն ճանաչում ոչ Գորիսում, ոչ խմբագրությունում):



Լուսինե Ջաքարյան



Արթուր Մնացականյան



Սիրուշ Ակլունց



Մանյա Ծատրյան

**Լուսինե Ջաքարյան**, Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն

**Արթուր Մնացականյան**, Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն

**Սիրուշ Ակլունց**, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն

**Մանյա Ծատրյան**, Վարդավանքի դպրոցի աշխատակից, Գեղի դպրոցի ուսուցիչ, «ԱՐՄ Տուր» տուրիստական կազմակերպության Կապանի ներկայացուցիչ

## Այունյաց երկրի մարզպետը շինծու քրգործով փորձում է ազատությունից զրկել «Այունյաց երկիր» խմբագրին

Ովքեր եւ ինչու են միացել «Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի դեմ կեղծապատիր արշավին:

Այունյաց երկրի մարզում քրեական գործ է հարուցվել «Այունյաց երկիր» թերթի խմբագրության դեմ: Թերթը մարզային միակ լրատվամիջոցն է, որ փաստերը եւ իրադարձությունները ներկայացնում է անկողմնակալ, օբյեկտիվ, բազմակողմանի, ինչի համար էլ բազմիցս է հետապնդվել, հալածվել, բայց շարունակել է իր ճշմարիտ ճանապարհը:

Եվ ահա՝ հերթական ճշունքները մարզային թերթի ու նրա խմբագիր Սամվել Ալեքսանյանի դեմ:

Այն, ինչ այս օրերին կատարվում է Այունյաց երկրի մարզում ընդդեմ «Այունյաց երկիր» թերթի, մասնավորապես նրա խմբագրի հանդեպ, հաջողության հասնելու դեպքում կդառնա նախադեպ հանրապետության յուրաքանչյուր լրատվամիջոցի պատժելու համար:

Այսօր հաջողությամբ պայքար է մղվում ընդդեմ երկու տարի առաջ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից վաստակավոր լրագրողի կոչման արժանացած անձի հանդեպ. մեկնաբանություններն ավելորդ են:

Հարուցված քրեական գործի մեջ ոչ միայն զավեշտալի, այլև վարմանալի շատ դրվագներ կան. անդրադառնանք միայն մի փաստի:

«Այունյաց երկիր» թերթի բաժանորդագրությունը սովորաբար իրականացվում է տարվա երկրորդ կեսին՝ օգոստոս-դեկտեմբեր ամիսներին: Հարց է առաջանում՝ եթե ինչ-որ տնօրեններ կան անհատներ ունեին դժգոհություն կամ անհամաձայնություն, ապա ինչու է ժամանակին չեն բողոքել վերադասին կամ իրավապահ համակարգին:

Նույնը վերաբերվում է նաեւ Մանյա Ծատրյանին, ով ինչ-որ չարագործության առնչակից լինելու մեջ կասկածվելուց հետո միայն որոշեց խոսել ընդդեմ խմբագրի:

Այդ ամենն ունի մեկ պատասխան՝ ի սկզբանե հստակ ծրագրված է եղել Սամվել Ալեքսանյանին ֆիզիկապես ոչնչացնելու սցենար, որը ձախողվեց 2018թ. հունվարի 16-ին, երբ Ալեքսանյանը ՌԴ էր մեկնել՝ հարազատ քույրիկի հուղարկավորությանը:

Այժմ իրականացվում է պլան Բ-ն՝ օգտագործելով իշխանա-

կան որոշ լծակներ. եւ իբր այդ ամենն արվում է օրինական ճանապարհով:

Հանրությանը ներկայացնենք Կապանի եւ Գորիսի տարածաշրջանների այն անձանց, ովքեր գործիք դառնալով այլոց ձեռքում, ոստիկանություն դիմում են ներկայացրել ընդդեմ Սամվել Ալեքսանյանի եւ թերթի խմբագրության: Ընդ որում՝ դիմումները գրված են նույն բովանդակությամբ, անձանքն անգամ ընթերցելիս կհասկանա, որ դիմումատուները պատվեր են կատարում մեկ կենտրոնից:

Ովքեր են բողոքարկողները:

1. Գորիսի կոմունալ տնտեսության աղբահավաք բրիգադի բանվոր, ով ոչ միայն մտավոր խնդիրներ ունի, այլ տառաձանաչ չէ, չգիտի նույնիսկ՝ աշխարհում թերթեր կա՞ն, թե՞ ոչ:

2. Սիրուշ Ակլունց՝ ոստիկանության Այունյաց վարչության պետի տեղակալ Անդրանիկ Մինասյանի մորաքույրն է, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենը, կենսաթոշակային տարիքի է: Նրան առաջարկվել է եւս մեկ տարի շարունակել աշխատել՝ պայմանով, որ ցուցմունք տա թերթի դեմ: Ընդ որում՝ այս օրերին, նույն դպրոցում, նույն Սիրուշ Ակլունցի շնորհիվ լարված իրավիճակ է. վերջինս դպրոցի գրեթե բոլոր ուսուցիչների երաշխավորմամբ վարել է վերցրել ու չի մարել:

3. Արթուր Մնացականյան՝ Կապանի 3-րդ հիմնական դպրոցի տնօրեն: Նրա տնօրեն ընտրվելու արդյունքում պատմությանն անդրադարձել են հանրապետական լրատվամիջոցները, երբ ընտրությունները մի քանի անգամ չեղյալ հայտարարվեցին, միայն թե նա դառնա տնօրեն: Մարզպետ Վահե Հակոբյանի հանձնարարությամբ ստուգումներ են իրականացվել Արթուր Մնացականյանի նախկին աշխատավայրում՝ Այունյաց գյուղի հիմնական դպրոցում, հայտնաբերվել են չարաշահումներ՝ Արթուրի պաշտոնավարման ժամանակին առնչվող: Առաջարկվել է կամ ցուցմունք տալ թերթի դեմ կամ ստուգումների արդյունքները կողարկվեն դատախազություն: Ի դեպ, վերջինս ամիսներ առաջ առաջադրվել էր Կապան համայնքի ավագանու թեմկածու եւ խայտառակ պարտություն կրել:

4. Լուսինե Ջաքարյան՝ Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն: Վերջինիս այդ պաշտոնում նշանակեցին ապօրինաբար՝ դպրոցի նախկին տնօրեն, մարզի ճանաչված ու հարգ-

ված մտավորական Լեւոն Մարգարյանի փոխարեն: Ընդ որում՝ Լուսինեն տնօրենի պաշտոնում նշանակվելու ժամանակ չի ունեցել պետական մուշի բարձրագույն կրթության դիպլոմ եւ տնօրենի պաշտոնի համար անհրաժեշտ հավաստագիր: Վերջինս դպրոցի տնօրեն նշանակվելուց երկու տարի առաջ ազատվել էր Կապանի մանկապարտեզներից մեկի տնօրենի պաշտոնից՝ իր պարտականություններն անբավարար կատարելու մեղադրանքով: Միայն այն հանգամանքը, որ Լուսինեին աշխատանքից ազատել էր Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, մարզպետ Վահե Հակոբյանը նրան աշխատանքի տեղավորեց (Կապանում առկա է մարզպետ-քաղաքապետ հակադրությունը): Ի դեպ, Լուսինեն մարզի դպրոցի այն տնօրեններից է, ով ազատ ելունուտ ունի մարզպետի աշխատասենյակ:

Իսկ Մանյա Ծատրյանը, ում Սամվել Ալեքսանյանը կասկածում է ռուսաստանյան իր այցի երթուղին իմանալու ու հանցախմբին ներկայացնելու մեջ, ոստիկանությանը հայտարարություն է տվել, թե խմբագիրը ժամանակին սեռական ոտնձգության փորձ է կատարել իր նկատմամբ: Նա աշխատում է երեք տեղ՝ Վարդավանքի, Գեղի դպրոցներում եւ տուրիստական ինչ-որ կազմակերպության ներկայացուցիչն է Կապանում, վայելում է մարզպետի հովանավորությունը: Ամիսներ շարունակ խնդրել է Ս. Ալեքսանյանին՝ խմբագրությունում աշխատանքի ընդունվելու համար, պատրաստ եղել անգամ առանց աշխատավարձի աշխատել թերթի խմբագրությունում՝ իբր լրատվության ոլորտին ծանոթանալու նպատակով: Իսկ երբ ասել են՝ ներկայացրեք փաստաթղթերն աշխատանքի ընդունվելու համար՝ խուսափել է ներկայացնել: Ընդ որում՝ վերջինս քանիցս ցանկացել է գիշերել Ս. Ալեքսանյանի մոտ՝ իբր անձնական կարելու հարցեր քննարկելու պատճառաբանությամբ, սակայն բոլոր դեպքում էլ խմբագրի կողմից դուրս է վճարվել:

Միավորվենք ընդդեմ ապօրինի քայլերի, բողոքի մեր ձայնով երկրիս պատկան մարմինների ուշադրությունը իրավիճակին խնդրի վրա:

**Հարգանքներով՝ Ա.Հովհաննիսյան, Մ.Բազարյան**  
norlur.am  
5 փետրվարի 2018թ.

Գարիկ Կարապետյանը ոչ տվյալ հիմնարկի սեփականատերն է, ոչ տիրապետողը: Ուրեմն՝ ի՞նչ հիմքով է նա հանդես է եկել, երբ կամայաբար արգելել է թերթի առաքումը, երբ էլեկտրոնային հաշիվը (իր ղեկավարից թաքուն) ներկայացրել է Գորիսի ոստիկանություն, երբ հերյուրանք է տարածում թերթի հաշվապահի գանգերի կապակցությամբ:

Այս դեպքը, որքան էլ ջանա շահագրգիռ կողմը, ոչ միայն չի տեղավորվում շորթում հասկացության, այլև շորթման փորձի տակ, քանզի, կրկնում ենք, բողոքաբերը ոչ հիմնարկի սեփականատերն է, ոչ տիրապետողը, ոչ էլ թերթի բաժանորդ է:

\*\*\*

Ամփոփենք ասվածը՝ բացակայում է շորթման առարկան: Չկա գոնե մեկ փաստ կամ ապացույց, որ հաշվապահը սպառնացել է դիմումատուներին, ընդհակառակը՝ կան ապացույցներ (խմբագրության աշխատակիցների վկայություններ), որ Գայանե Բաղդասարյանը որեւէ մեկի հետ խոսելիս սպառնալից արտահայտություններ չի օգտագործել: Միաժամանակ՝ դիմումատուների վերաբերյալ չկան տեղեկություններ, որոնք օրենքով սահմանվածի շրջանակներում կարող են լինել արատավորող: Այնուհետեւ՝ բացակայում է շորթման սուբյեկտիվ

կողմը՝ դիտավորությունը: Բացակայում է գործողության շահադիտական բնույթը:

Եվ ուրեմն՝ հարց Այունյաց երկրի ոստիկանության ղեկավար Արշավիր Գեորգյանին՝ լավ, հասկացանք, մարզպետը պատվիրել է եւ դուք էլ շնչակտուր ձգտում եք ի կատար ածել պատվերը, ո՞ր է հանցակազմը, ո՞ր է դիտավորությունը, ո՞ր է շահադիտական ձգտումը, ո՞ր է հանցագործության առարկան:

Այդ հարցերն առայժմ պատասխան չունեն, ինչի համար էլ մի փոքր ուշացումով հրաժարվել ենք բացատրություն տալ Կապանի եւ Գորիսի ոստիկաններին: Հրաժարվելու ենք բացատրություն կամ ցուցմունք տալ նաեւ մարզի մյուս իրավապահ մարմիններին, քանի դեռ նրանց ղեկավարները հնազանդորեն կատարում են Վահե մարզպետի ապօրինի հանձնարարականները:

Այդ կապակցությամբ նման կ ենք հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Աղվան Հովսեփյանին՝ խնդրելով խմբագրության հետ առնչվող բոլոր նյութերի քննությունը տեղափոխել հանրապետության մեկ այլ մարզ:

Պահանջը շարունակելու ենք այսուհետ եւս, այլապես ցուց-

մունք կամ բացատրություն կտանք միայն դատարանում:

\*\*\*

Տեղի ունեցող իրադարձությունները շարունակում ենք գնահատել խոսքի ազատության դեմ պայքար, «Այունյաց երկիր» թերթի ու syuniacyerkir.am կայքի գործունեությունը կասեցնելուն միտված գործողություններ, Սամվել Ալեքսանյանի օրինական լրագրողական աշխատանքը խափանելուն ուղղված ակնհայտ քայլեր:

Չկարողանալով կատարել իր երդումը՝ 2017-ին փակելու «Այունյաց երկիր»-ը, մարզպետը դիմում է ամենաստոր եւ նույն կալի քայլերի օգտվելով վերին իշխանությունների թողտվությունից:

Այդ ամենին զուգահեռ Այունյաց երկրի մարզպետարանը պաշտոնական գրություններ է էլեկտրոնային փոստով հղել մարզի բոլոր դպրոցներին՝ 5-ական օրինակից բաժանորդագրվելու Վահե-էլիզաբեթի ընտանեկան թերթը: Ընդ որում՝ այդ բաժանորդագրությունը պիտի կատարվի երեխաների կրթության եւ դաստիարակության համար պետական բյուջեից հատկացված գումարներով: Եվ դա, ըստ ոստիկանապետի ու Վահեի, օրինական է ...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# Մաքսիմ Գրիգորիչը. դիմանկարի ուրվագիծ



Տարիքի առաջացման հետ մարդ արարածը հաճախ է հետ պատում ապրած կյանքի ժապավենը, որի եւ ռեժիսորը, եւ սցենարիստը, եւ գլխավոր դերակատարն ինքն է: Շարունակվող այդ վավերագրական կինոնկարում հազարավոր դեմքեր ու դեպքեր են հանդիպում, որոնց մի մասը նա անպայման կցանկանար կտրել, հեռացնել ժապավենից, որը, դժբախտաբար, ամհմար է, իսկ մի մասի դիտմանն էլ մասնակից անել ուրիշներին, որը, բարեբախտաբար, հնարավոր է, ինչն էլ կփորձեն կատարել:

Նախախնամության կամոք երիտասարդության տարիներին հանդիպել են կյորուեցի Մյասնիկ Գրիգորի Ավանեսյանին եւ երկար տարիներ վայելել նրա ու նրա ընտանիքի ընկերությունն ու բարեկամությունը: Շրջապատում համարյա բոլորը՝ նույնիսկ հարազատները, նրան ռուսական հնչելությանը Մաքսիմ Գրիգորիչ էին ասում:

Արդեն մի քանի տարի է, ինչ նրա մասին անցյալով ենք խոսում:

Ինքը 11 տարեկան էր, իսկ քույր Չանեստը եւ Գոգո ու Բորիս եղբայրները՝ ավելի փոքր, երբ կյանքից հեռացավ Թելիկ մայրիկը, իսկ Գրիգոր հայրիկն այդպես էլ չվերադարձավ պատերազմից: Չորս մանկահասակ երեխա՝ անհայր, անմայր, եւ պատերազմ. տասնյակ տարիներ անց էլ այս պատկերը սարսուռ է առաջացնում մարդու մեջ:

Գյուղում հարազատներ ունեին, բայց բոլորն էլ նույն հալի էին՝ չոր հացի կարոտ: Քրոջ մահվան գույժը քեռի Եղիշեին (բժշկական ծառայության գնդապետ Եղիշե Թովմասի Օհանյան, 1915-1989թթ.) հասավ 1943 թվականի գարնանը՝ ռազմաճակատում: Երիտասարդ բժիշկը ղեկավարում էր դաշտային հոսպիտալը: Նա դեռ չէր հասցրել սեփա-

կան ընտանիքը ստեղծել: Այս պայմաններում հենվից հեռու կարողացավ իր երիտասարդ ուսերին առնել քրոջ որբացած ընտանիքի ողջ ծանրությունը եւ տարավ ամբողջ կյանքի ընթացքում:

Այսօր գուցե եւ դժվար է հավատալ, որ որեւէ մեկը կիրառարկի իր փայլուն կարիերայի հեռանկարից հանուն մտերմի ընտանիքի, եթե նույնիսկ դա իր հարազատ քրոջ ընտանիքն է: Բայց փաստ է, որ քեռի Եղիշեն գնաց դրան: 1947-ին երիտասարդ զինվորական բժշկին առաջարկեցին վարչության պետի պաշտոն մայրաքաղաք Մոսկվայում: Նոր էր ամուսնացել: Ծնվել էր առաջնեկը՝ Արմենը: Սակայն հայրենիքից մի ձայն կանչում էր նրան: Երիտասարդ ընտանիքը որոշեց վերադառնալ Չայաստան:

Մաքսիմ Գրիգորիչը մինչեւ վերջ էլ որդիական սիրով էր հիշում քեռի Եղիշեին: Հիշում էր, թե ինչպես մինչեւ Չայաստան վերադառնալն ամեն ամիս դրամական փոխանցումներ էր կատարում եւ ծանրոցներ ուղարկում, ինքը ոտքով գյուղից գնում էր շրջկենտրոն, ստանում դրանք:

Հայրենասիրության մասին տասնյակ, գուցե նույնիսկ հարյուրավոր գրքեր, հոդվածներ են կարդացել, մի քիչ պակաս ներկայացումներ, հեռուստահաղորդումներ, կինոնկարներ դիտել, բայց դրա մասին հիմնավոր դասեր են ստացել միայն Մաքսիմ Գրիգորիչից՝ ակամայից ակամատեղ լինելով նրա կյանքին, ապրելակերպին, կենցաղին: Դրանք բոլորն էլ հազար թելերով կապված էին հայրենիք գաղափարի հետ: Ով նրա հետ ընկերություն, բարեկամություն է արել, նշանակում է անցել է այդ դպրոցով:

Նրա հայրենիքը սկսվում էր Գորիսի տարածաշրջանի Կյորու գյուղի քերձերից ու ձորերից, այդ

հիրավի կախարդական աշխարհից: Նրա համար այդ ձորերում թռչունների բերած սերմերից բուսած քոլի տանձիկ համով պտուղ աշխարհի ոչ մի այգում, անտառում չկար, իսկ մոշի ու գլեռի առավելությունների մասին խոսելն ավելորդ է: Մոտիկ բարեկամները գիտեին նրա այս թուլության մասին եւ առիթի ու հնարավորության դեպքում այդ բարիքները բերում էին նրան: Հորորում էր կնոջը՝ Ռիմային, ով շատ հայուհիների նման խոհանոցի մեծ գիտակ ու վարպետ է, քոլի տանձն ու գլեռը թթու դնել: Նա այդ պտուղներից յուրահատուկ թթու էր պատրաստում: Այնպես որ Մաքսիմ Գրիգորիչը կլոր տարիս դրանք ունենում էր ձեռքի տակ եւ օգտագործում ինչպես մանանա: Շատերի նման նրանց ճաշասենյակում եւս կար ոգելից խմիչքների փոքրիկ բար, որտեղ թանկարժեք կոնյակի, օղու եւ ոգելից այլ խմիչքների մեջ անպակաս էր ձեւավոր բյուրեղապակյա գրաֆիկով փոքր հայրենիքից ստացված թթի օղին, որը նրա համար այդ հավաքածուում եղած ամենագնահատված ընպելիքն էր: Տնեցիները հյուրի նկատմամբ տան ղեկավարի համակրանքի աստիճանը որոշում էին այդ հայտնի գրաֆիկից նրան հյուրասիրել-չհյուրասիրելու փաստով:

Ստերմիկ, բարեկամական հարաբերությունների մեջ էր անցած դարի 70-80-ական թվականների Գորիսի տարածաշրջանի ղեկավարներից շատերի հետ: Իմ հիշողության մեջ մնացել է նրա բարեկամությունը հատկապես Արամ Հարությունյանի, Անժելա Բուրադյանի հետ, իսկ Սերոբ Գալստյանի ու նրա մտերմությունը վեր էր ածվել ընտանեկան բարեկամության եւ ընկերական հարաբերությունների: Երբ լսում էր, որ նրանցից որեւէ մեկը երեւանում է, աշխատում էր անպայման հյուրըն-

կալել նրանց, ինչ-որ բանով օգտակար լինել: Իսկ օգտակար լինելու եւ առիթներ էին լինում, եւ պատճառներ: Այն տարիներին Մաքսիմ Գրիգորիչը երեւանում մանրամեծաժախ առետրի խանութի վարիչ էր: Աշխատանքի բերումով թե՛ հանրապետությունում եւ թե՛ Խորհրդային Միությունում, այսօրվա լեզվով ասած, տնտեսվարողների հետ շփման մեծ մակերես ուներ: Այդ կապերն օգտագործելով՝ շրջանի համար բազմաթիվ հարցեր էր կարողանում լուծել: Այն տարիներին տնտեսական շատ հարցեր առանց կենտրոնի չէին լուծվում (այսօր էլ այդպես է): Կուխոգ-սովխոգները նույնիսկ խտացրած կերն էլ էին երեւանից ստանում՝ Երեւանի միջոցով: Մաքսիմ Գրիգորիչի ջանքերով պլանավորվածից դուրս տարեկան մի քանի վագոն նման կեր մեր շրջանն անպայման ստանում էր: Այս բնագավառի հետ առնչվածները լավ կհասկանան, թե դա ինչ նշանակություն ուներ շրջանի համար:

Կենտրոն-շրջան տնտեսական կապերը միշտ չէ, որ հստակ էին գործում: Դրանք շատ հաճախ էին խախտվում: Պատճառները ոչ թե աշխատանքի կազմակերպման ձեւերն էին, չնայած չէր կարելի դա անտեսել, այլ ուղղակի միջոցների բացակայությունը: Ահա նման մի տարի, բերքահավաքի եռուն շրջանում, մեր տարածաշրջանի տնտեսությունների բեռնատարների մեծ մասը հարկադիր պարապուրդի մեջ էր, անվաղողեր չկային: Նրա միջոցով տնտեսությունների մեծ մասը կարողացավ լուծել այդ հարցը: Դա ուղղակի փրկություն էր: Տարիներ անց էլ այդ օրերի ականատեսները հիշում են այդ մասին: Նրա համար թանկ էր այն ամենը, ինչ կապված էր հայ, Չայաստան, Չանգեզուր, Գորիս անվանումների հետ: Դրանք դուրս էին որեւէ մրցակցությունից:

Չգիտեմ, նա հիշո՞ւմ էր վաղամեռիկ մայրիկին, թե՞ չէ: Երբեք չեն հարցրել: Երեւի հիշում էր, որովհետեւ ամենափոքր առիթի դեպքում պատմում էր, որ գյուղի իրենց ընկուզեմու պտուղն աշխարհի ամենահամով, ամենալուրդ տնտեսական է, ու որպես դրա վկայություն՝ շարունակում էր. մայրիկը դրանք օգտագործում էր ճաշի մեջ որպես յուղին փոխարինող: Մանուկ Մյասնիկի հիշողության մեջ մնացել էին սիրելի մայրիկի պատրաստած ճաշերը, որոնց երեսին լողացող ընկուզի դեղնավուն փշրանքները նա նմանեցրել է յուղի դեղին կաթիլներին:

Մի ուշ աշնան նրան ընկերակցել են մայրիկի շիրմին այցի գնալիս: Վաղուց լքված գյուղի փոքրիկ գերեզմանատան հատուկներ կանգուն մնացած շիրմաքարերից մեկը նրա մայրիկինն է: Այն այցելուին, պատահական անցորդին պատմում է, որ ննջեցյալը ընդամենը 29 տարեկան է եղել:

Իրենց հայտնի ընկուզեմին դեռ կար: Նրա լպրծուն խաշամի տակից ոտքերի շոշափումով մի տասնյակ ընկուզ ճարեցինք: Այդտեղ տեսա, համոզվեցի, որ 10-ամյա Մյասնիկի եւ 60-ամյա Մաքսիմ Գրիգորիչի տարիքների տարբերություն չկա, գոյություն չունի: Նույն մանուկն էր դարձել, ուրախանում էր, սովորականից փոքր պտուղները մաքրում ձեռքով, չորացնում թաշկինակով եւ տեղավորում թանկարժեք կոստյումի գրպաններում: Գիտեի, ավելի ճիշտ համոզված էի, որ դրանցից ոչ

մեկն ինքը չի ճաշակելու, նա դրանք բոլորը նվիրելու է ծանոթ-բարեկամներին՝ հետո էլ պատմելու աշխարհի ամենայուրուրու ընկուզի մասին իր ստեղծած լեգենդը, որին ինքն անվերապահորեն հավատում էր:

Հավանաբար ծնողական փառաբանք չտեսած լինելու հանգամանքն էր նրա մեջ ծնել զավակների նկատմամբ սովորական ծնողական սիրուն գերազանցող մի զգացում: Ավագ որդին, ում հոր անունով Գրիգոր է կոչել, ընտանիքով վաղուց Մոսկվայում է, Արմենը՝ Չեխիայում, Աշոտն արդեն թոնմատեր է, ապրում է հայրական տանը: Այդ, որպես հայր, շատ զգացմունքային էր: Առավել նկատելի էր նրա կապվածությունը միակ դասեր՝ Ալլայի հետ:

Ասում են՝ մարդու ամենամեծ հարստությունը նրա սերունդն է: Չգիտեմ ով ինչպես, բայց ես այս մտքի հետ համաձայն եմ անվերապահորեն: Եվ քեռի Եղիշեի, եւ Մաքսիմ Գրիգորիչի զավակներն իրենց ծնողների լավագույն հատկանիշները կրողներն են: Հեռու-հեռվից նկատել են, որ քեռի Եղիշեի Արմենի եւ Մաքսիմ Գրիգորիչի կրտսեր որդի Արմենի եղբայրական հարաբերությունները դրա հաստատումն են ու հիշեցնում են իրենց ծնողների միջուկեղծ հարաբերությունները:

Ժամանակին ինքն ու իր քենակալը հաճախ էին վիճում, ինչպես լինում է այդ կարգավիճակում գտնվող հայ տղամարդկանց հետ: Վեճի հարցերից մեկն էլ այն էր, թե ինչ կարծիք ունի նրանցից յուրաքանչյուրը ծնող-զավակ հարաբերությունների մասին: Նրա քենակալը գտնում էր, որ յուրաքանչյուր ոք նախ իր հարցերը, հոգսերը պետք է հոգա, հետո նոր մտածի դիմացինի մասին, եթե այդ դիմացինը նույնիսկ իր հարազատ զավակն է:

Վերջին տարիներին, երբ նրա զավակներն իրենց վերաբերող հարցերում ավելի շատ էին ինքնուրույնություն ցուցաբերում, քան առաջ էր, ասել է թե՛ ավագների կարծիքը կամ չէին հարցնում, կամ էլ ուղղակի հաշվի չէին առնում, դժգոհում էր, հետին ժամանակով գտնում, որ իր երջանկահիշատակ քենակալը ճիշտ էր, երբ ասում էր՝ նախ մորթուս, հետո որդուս:

Շատ էր սիրում սառը ջրով լվացվել: Դա ամուսն էր օրական մի քանի անգամ: Սովորական լվացվել չէր, այլ մի ամբողջ արարողակարգ: Շարահեղ մաքրասեր էր: Կատակում էինք՝ Մաքսիմ Գրիգորիչը հնար ունենա՞ր խմելու ջուրն էլ կլվանար:

Երազում էր հայրենի գյուղում, որ ձորից դուրս էր եկել, նոր, Հարթաշեն արիեստական անվան տակ միավորվել հարեւան բախտակից երկու գյուղի հետ, տուն կառուցել, այգի տնկել: Նախապատրաստել էր տան նախագծերը, որոշել, թե այգում ինչ ծառեր, թփեր է տնկելու: Բայց Խորհրդային օրերը նրա բազում լավ արարքները վախեցած չիմուկներին չկամարտեց անկատար թողեցին նրա այդ երազանքը: Գուցե այն իրականացնեն հայի բախտով օտար ափերում հայտնված նրա զավակները, երբ նորից տուն դառնան, իրար զլխի հավաքվեն:

Լավատես լինե՞ք, կզա նաե այդ օրը եւ ոչ միայն նրանց համար...

# Ուլքեր էին «Գորիս»-ի բանարի հանցախմբի անդամները. բացառիկ մանրամասներ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետ, գնդապետ Միքայել Համբարձումյանը, անդրադարձալով «Գորիս» քրեակատարողական հիմնարկում իրականացրած քննչական գործողությունների թեմային, հայտնել է. «**«Գորիս» ԲԿ-ում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախնական տվյալներով հստակ երևում է, որ տեւական ժամանակ «Գորիս» ԲԿ թմրամիջոցներ են մտցվել առնվազն 2 եղանակով, որոնցում ներգրավված են եղել ԲԿ աշխատակիցներ, անազատության մեջ պահվող, այսպես կոչված, քրեական հեղինակություններ և դրսում գտնվող անձինք, ուլքեր հայթայթել են թմրամիջոցները և ուղարկել ԲԿ»:** Եվ այսպես՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ ԿԼ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության ծառայողների կողմից «Գորիս» քրեակատարողական հիմնարկի ռեժիմային մասնաշենքում քննչական և դատավարական գործողություններ էին կատարել, ինչը դատապարտյալների դժգոհության առիթ էր դարձել: Վերջիններս հարվածել են խցերի դռներին և կերակրադրամակներին, պատուհաններից և կերակրադրամակներից նետել այրված անկողնային պարագաներ և կենցաղային այլ իրեր, կտորել մի շարք խցերի դռներն ու կերակրադրամակները, հայտնել և հնչեցրել վիրավորական արտահայտություններ: Կալանավորների այս վարքագծի մասով Սյունիքի մարզի դատախազությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով՝ զանգվածային անկարգություններ:

վացան: Մեզ հասած տեղեկություններով՝ ԱԱԾ-ն տվյալներ է ունեցել, որ կալանավորում տեւական ժամանակ առանց արգելքների թմրամիջոց է մատակարարվում դատապարտյալներին և կալանավորներին: Ավելին՝ մեզ հայտնի էր դարձել, որ թմրամիջոցի այս պատմության մեջ ներգրավված է Գորիս քաղաքի բնակիչ՝ Աննան: Մեզ հասած լուրերի համաձայն՝ ԱԱԾ-ն Աննային եւս այս գործով հարցաքննել է և այս ամենի արդյունքում հոկտեմբերի 30-ին ստուգումներ էր սկսել «Գորիս» քրեակատարողական հիմնարկում, ինչն էլ զայրացրել էր կալանավորներին:

**ԱԱԾ բացահայտումը**  
Ի վերջո, իրականացված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում



քում ի՞նչ բացահայտեց ԱԱԾ-ն: «Ժողովուրդ» օրաթերթն ազգային անվտանգության ծառայությունից հետաքրքրվեց, թե ՀՀ ԱՆ «Գորիս» ԲԿ-ում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքով կալանավորում բուժող հրահրողների թվում են նաև ԲԿ աշխատակիցները, քանի որ հենց նրանց ոչ ճիշտ աշխատանքի արդյունքում էր հնարավոր թմրամիջոցներ մատակարարել կալանավորներին: Գործի նախաքննության արդյունքում հնարավոր է եղել պարզել ԲԿ անձնակազմի իրական դերակատարությունն այդ գործընթացում: Եւ ՀՀ տարբեր ԲԿ-ներում վերջին աղմուկոտ բացահայտումները չեն վկայում արդյոք այն մասին, որ այդ համակարգում ամենահաճախ են ոտնահարվում օրենքն ու իրավունքները: Ի պատասխան մեր այս հարցադրմանը՝ ազգային անվտանգության

ծառայության քննչական վարչության պետ, գնդապետ Միքայել Համբարձումյանը պատասխանել էր. «**«Գորիս» ԲԿ-ում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքի առթիվ հարուցված քրեական գործով դեռևս նախաքննություն է ընթանում, ուստի ստիպված են մեր ունեցած տվյալները սեղմ ներկայացնել: Այնուամենայնիվ, կարող են փաստել, որ գործի նախնական տվյալներով հստակ երևում է, որ տեւական ժամանակ «Գորիս» ԲԿ թմրամիջոցներ են մտցվել առնվազն 2 եղանակով, որոնցում ներգրավված են եղել ԲԿ աշխատակիցներ, անազատության մեջ պահվող, այսպես կոչված, քրեական հեղինակություններ և դրսում գտնվող անձինք, ուլքեր հայթայթել**

խաբանություն է իրականացվում, և այս պահի դրությամբ կաշառք ստանալու համար մեղադրանք է առաջադրվել 1 պաշտոնատար անձի: Ներկա դրությամբ նշված քրեական գործի նյութերով հարուցվել են թվով 5 նոր գործեր, որոնցով մեղադրվում են 11 անձինք, նրանցից 2-ը՝ «Գորիս» ԲԿ աշխատակիցներ, 1-ը՝ «Գորիս» ԲԿ բժիշկ: Նշեն նաև, որ ՀՀ ԱՆ «Գորիս» ԲԿ-ում խուզարկությունների կատարման անմիջական մասնակցություն են ունեցել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցները, և նրանց արոժեխոնալիզմի արդյունքում է, որ հաջողվել է խուզարկություններն իրականացնել անակնկալ և արդյունավետ՝ հայտնաբերելով խցերում ապօրինի պահվող թմրամիջոցները և այլ արգելված առարկաներ: Գործի արդյունքներով պարզված տվյալներն ամբողջ ծավալով ներկայացվելու են ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հայտնաբերված խախտումները և թերությունները վերացնելու, ինչպես նաև դրանք թույլ տված անձանց նկատմամբ ծառայողական բնույթի ներգործության միջոցներ ձեռնարկելու համար»:

**Իսկ որտե՞ղ էր ԲԿ պետը**  
Այս իրավիճակում զարմանալի է մեկ բան, թե ուր էր նայում Գորիսի քրեակատարողական հիմնարկի պետ Արտուշ Մաքունցը, երբ իր ղեկավարությամբ գործող հիմնարկում նման իրավիճակ է տիրել: Միգուցե այս ամենը կատարվել է նրա «թեթև» ձեռքով: Ինչ-չե՞լ: ԱԱԾ-ում այս գործով քննությունը շարունակվում է: Նշենք, որ ԲԿ վարչությունում տարածված խոսակցությունների համաձայն՝ բանտապետին պատասխանատվության չեն կանչի, քանի որ Մաքունցը վաղուց պետք է թռչակի գնար, սակայն նրա պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել էր: Ու հիմա այս բացահայտումն առիթ կլինի՝ նրան թռչակի ուղարկելու գործընթացն արագ կազմակերպելու համար: Տեսնենք, թե ինչ արդյունք կտա քննությունը:

Քննար Մանուկյան  
armur.am  
3 փետրվարի 2018թ.

# Սյունիք գյուղի բնակիչները գյուղմթերքի միջոցով սնդիկ, պղինձ ու մոլիբդեն են ուտում

էջ 2  
**այնքան էլ դրական երևույթ չէ, մի կողմից՝ խոտում է համայնքի աղքատության մասին, մյուս կողմից՝ երբ մարդն իր աղտոտված այգում աճեցված մթերքը համախակի օգտագործում է, բնականաբար, նրա առողջական ռիսկերը շատանում են»:** Մոտ 200 մուշ է վերցվել տարբեր պտուղ-բանջարեղենից, և ինչպես Պիպոյանը վստահեցրեց՝ առաջին կարգի թունավորության 9 էլեմենտ է ուսումնասիրվել՝ մկնդեղ, կապար, սնդիկ, պղինձ, մոլիբդեն, միկել, քրոմ, ցինկ, կադմիում. «Շատ տխուր պատկեր ենք ստացել, քանի որ պարզվեց, որ մուսն սննդամթերքների մուշները միաժամանակ պարունակում են տարբեր տեսակի ծանր մետաղներ: Ասենք՝ կանաչեղենի, լուլիկի, սմբուկի մուշները պարունակել են գրեթե բոլոր ուսումնասիրվող էլեմենտները, 9-ից 7-8 էլեմենտները եղել են մուսն բանջարեղենի մեջ: Բոլոր 9 էլեմենտներն էլ հայտնաբերվել են նրանց սննդակարգում: Սա նշանակում է, որ մարդը համալիր ենթարկվում է այդ ծանր մետաղների ազդեցության»:

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ «Սյունիք գյուղի բնակիչների՝ սնդիկ միջոցով ստացվող պղինձի և մոլիբդենի օրական ընդունվող քանակները գերազանցում են թույլատրելի արժեքը: Հետազոտված տարածքում աճեցված պտուղ-բանջարեղենի հաճախակի սպառումը կարող է հանգեցնել առողջական խնդիրների առաջացման: ՀՀ լեռնահանքային շրջաններում աճեցված բուսական ծագման սննդամթերքում երբեմն գրանցվում են մի շարք ծանր մետաղների միաժամանակ, ինչը փաստում է, որ պետք է զննատվի նաև բազմամետաղական ռիսկը»:

Սյունիք համայնքի տղամարդկանց համար կարտոֆիլն ու գազարն ամենաթունավոր սննդամթերքն են: Պիպոյանն ասաց, որ մոլիբդենը, որպես առողջական ռիսկի գործակից, մոտ 6 անգամ գերազանցում է, քանի որ այս տղամարդիկ ավելի շատ են օգտագործում այն գյուղմթերքները, որոնց մեջ մոլիբդենի պարունակությունը

բարձր է: Օրինակ ըստ ուսումնասիրության, առողջական ռիսկի գործակիցը Սյունիք գյուղի տղամարդկանց համար՝ բազուկի ու խաղողի օգտագործման հետևանքով, սնդիկի ազդեցության ռիսկը 3-4 անգամ է գերազանցում, լոբիի միջոցով պղինձի ազդեցության ռիսկը 1,5 անգամ է գերազանցում: Պղնձի պարունակությունը բարձր է նաև տաքեղեղի, եգիպտացորենի, կանաչ սոխի մեջ: Սյունիք գյուղի կանայք շատ են օգտագործում եգիպտացորեն, խաղող, լուլիկ, կանաչ սոխ, բազուկ, գազար, սմբուկ, լոբի. այս գյուղմթերքներում առկա են պղինձ, սնդիկ և



մոլիբդեն: Կանաչ սոխի օգտագործման հետևանքով առաջացող մոլիբդենի ազդեցությամբ առողջական ռիսկը թույլատրելի շեմը գերազանցում է 5 անգամ, կարտոֆիլ օգտագործելիս՝ 4 անգամ, գազարի օգտագործման հետևանքով մոլիբդենի ազդեցության թույլատրելի շեմը գերազանցում է մոտ 8 անգամ: Այս համայնքի կանանց առողջական ռիսկի գործակիցը սնդիկի ազդեցությամբ բազուկի և խաղողի օգտագործման հետևանքով գերազանցում է մոտ 4 և 2 անգամ: Եվ եթե հաշվի առնենք, որ ծանր մետաղներով «հարուստ» այս գյուղմթերքները

րը տեղի բնակիչները կարող են միաժամանակ ու օրը մի քանի անգամ օգտագործել, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ սաստիճանի թունավորում են ստանում այդ ծանր մետաղներն օրգանիզմ «ներմուծելով»: Այս ուսումնասիրությունը, ինչպես Պիպոյանն ասաց, իրականացրել են միջազգային դրամաշնորհի միջոցներով, 30 հազար դոլար է եղել բյուջեն: Պիպոյանի խոսքով՝ «Կառավարությունը չի ուզում օրենքի պահանջը կատարել և զննատվել թիրախային համայնքներում ռիսկի գնահատում: Մինչդեռ, եթե զննատվի ռիսկը, ապա հաջորդ քայլը պետք է լինի ծրագիր մշակել ու օրենք ընդունել, որի հիման վրա համաքաղաքաբար ընկերությանը կկարողանան պարտադրել մաքրել հողերը ծանր մետաղներից. սա նման ընկերության համար ուղղակի գրպանի ծախսի չափ գումար է: Իսկ ծրագրով, որը պարտավոր են մշակել, ուղեցույց ու պահանջ պետք է լինի, թե այդ համայնքներում որ մթերքն է հարկավոր աճեցնել, որը չի կլանում ծանր մետաղը, իսկ մյուս անհրաժեշտ մթերքները պետք է ապահովվի այլ՝ մաքուր համայնքներից: Իսկ այս շրջանի գյուղերի բնակիչները բարդեր են անում իրենց աղտոտված գյուղմթերքները, ու այսպես ասած՝ ես իմ թունավոր մթերքը թեզ են տալիս, դու էլ թո թունավոր մթերքն ես ինձ տալիս: Մի սարսափելի բան էլ՝ Սյունիք գյուղի բնակիչները Արծվանիկ պոչամբարին կպած հատվածում աճող մոշն են հավաքում, տանում Կապանի շուկայում վաճառում: Սյունիք գյուղի բնակիչները, փաստորեն, մոշը ե՛ւ թարմ են ուտում՝ թունավորվում, և պահածոյացնում են ու ձմռանն էլ թունավոր կոմպոսը խմում: Իսկ Արծվանիկի տարբեր ակերին տարբեր աղտոտվածություն է՝ տարբեր ծանր մետաղներով»:

ՆԵՒԼԻ ԲԱՐՍՅԱՆ  
aravot.am  
2 դեկտեմբերի 2017թ.

# Հայրենաճանաչությունը սկսվում է դպրոցից

Այս պարզ ճշմարտությանը լավագույնս հետամուտ են Մեղրու թիվ 1 դպրոցում: Պատմության ուսուցչուհի Նաիրա Հայրապետյանի ջանքերով կրթօջախի երրորդ հարկի մի հատվածը վերածվել է հայրենագիտական սրահի: Տեղական ինքնակառավարման օրը նույն-բերի 10-ին, դպրոցում կազմակերպված միջոցառումն անցկացվեց հայրենագիտական սրահում: «Համայնքը, որտեղ ապրում են ես» ընդհանուր խորագիրը կրող ցուցադրանքը երկու մասի է բաժանված «Համայնքն իմ շուրթերով», որտեղ ներկայացված են դպրոցականների շարադրություններն ու խոհերն իրենց բնօրրանի մասին եւ «Համայնքն իմ աչքերով», որի ներքո գետեղված էին աշակերտների կողմից արված գեղանկարները՝ Մեղրու պատմաճարտարապետական հուշարձանների եւ բնապատկերների արտացոլումներով:



Ցուցադրանքում ուշագրավ շատ բան կարելի է գտնել Մեղրու կամ որ նույնն է՝ պատմական Արեւիք գավառի (ըստ «Աշխարհացույցի») մասին, մասնավորապես, սելջուկյան, պարսկական, թուրքական տիրապետության օրոք տարածաշրջանը կոչվել է Գեմուազ (Գեմվազ): Արեւիքը հին եւ միջին դարերում գտնվել է Դվինի, Նախիջևանի, Օրդուբադի եւ Փայտակարանի նշանավոր ճանապարհների վրա, զգալի դեր խաղացել Սյունյաց նահանգի զարգացման գործում:

նարանագիրը, Դավիթ Բեկի գինակից Պապ գորավարը, Հայկունյուսի կենտկոմի քարտուղար Ռոբերտ Արզումանյանը, ակադեմիկոսներ Էդվարդ Աղայանը, Էմիլ Գաբրիելյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, շախմատիստ, միջազգային գրոսմայստեր Ռաֆայել Կահանյանը, 1917-1918թթ. Երեւանի քաղաքապետ Թադեոս Տոչյանը, ինժեներատեխնիկական ծառայությունների գեներալ-մայոր Տիգրան Մելքունյանը:

Մեղրին հարուստ է պատմական հուշարձաններով, որոնցից են Մեղրու վանքը, Շվանիձորի ջրանցույցը, Ագարակի քարավանատունը, բազմաթիվ կամուրջներ, Մեղրու սուրբ Աստվածածին եւ սուրբ Հովհաննէս Սկրտիչ տաճարը եւ տասնհինգերորդ դարերի որմնակարգերով եկեղեցիները, Կարճեւանի սուրբ ուխտը, Մանլեւի կուսանաց անապատը: Նշանավոր մեղրեցիներ են Երեմիա Մեղրեցի բա-

նարանագիրը, Դավիթ Բեկի գինակից Պապ գորավարը, Հայկունյուսի կենտկոմի քարտուղար Ռոբերտ Արզումանյանը, ակադեմիկոսներ Էդվարդ Աղայանը, Էմիլ Գաբրիելյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, շախմատիստ, միջազգային գրոսմայստեր Ռաֆայել Կահանյանը, 1917-1918թթ. Երեւանի քաղաքապետ Թադեոս Տոչյանը, ինժեներատեխնիկական ծառայությունների գեներալ-մայոր Տիգրան Մելքունյանը:

նարանագիրը, Դավիթ Բեկի գինակից Պապ գորավարը, Հայկունյուսի կենտկոմի քարտուղար Ռոբերտ Արզումանյանը, ակադեմիկոսներ Էդվարդ Աղայանը, Էմիլ Գաբրիելյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, շախմատիստ, միջազգային գրոսմայստեր Ռաֆայել Կահանյանը, 1917-1918թթ. Երեւանի քաղաքապետ Թադեոս Տոչյանը, ինժեներատեխնիկական ծառայությունների գեներալ-մայոր Տիգրան Մելքունյանը:

համեղ պտուղներով եւ բնության այլազան բերքով: Մեղրի գինին իր նմանը չունի: Մեղրի գետի երկու կողմից բարձրանում են կանաչ լեռները: Եվ լեռների վրա՝ ճոխ արոտավայրերը, հավանաբար յայլաները, որ Արեւիքի գյուղական բնակչությունն անցկացնում է ամառը իր անասուններով: Տեսել էք հայ լեռնաբնակների կարագի եւ սերի համը, վայելել էք հայ գյուղացու հյուրասիրությունը յայլաներում...

Մենք հեռանում էինք. ետեւը մնաց կամուրջներ չհանդուրժող Արաքսը: Մյուս ափին՝ անճան Մեղրին, Մեղրի գետի կանաչ հովիտն իր անզուգական գեղեցկությամբ...:

Ուշագրավ տեղեկություններ կան ցուցադրանքում Մեղրու կենտրոնում գտնվող չորս սուհների մասին, որոնց մասին ասում են, թե 400-600 տարեկան են: Դրանց մոտ ժամանակին հանդիպել են Դավիթ Բեկն ու Մխիթար սպարապետը: Մի սոսու փշակի մեջ հայ գինվորները պահել են իրենց սրերը, նետերն ու վահանները: Մյուսի մեջ աշխատել է մի կոշկակար, ով միանգամից չորս հաճախորդ է ընդունել:

Առաջիկայում հայրենագիտական սրահը կհամալրվի մոր բաժիններով եւ նյութերով: Նաիրա Հայրապետյանի փոխանցմամբ՝ մոր ցուցադրանք են նախատեսում՝ նվիրված Սարգստապատի, Բաշ-Ապարանի, Արաքսիլիսայի հերոսամարտերի 100-րդ տարեդարձերին եւ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին: Ինչպես նաեւ նպատակ ունեն պատերից մեկը նվիրել ռազմահայրենասիրական դաստիարակությանը միտված ցուցադրանքին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

## Կարմիր կակաչների գաղտնիքը (Քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակին)

Կարմիր կակաչները տարածվել են սահմանի երկայնքով: Օրոքում են իրենց զվիսկները, քանուց սվավում ու կարծես ասք են պատում մի հերոսի մասին, որի մահվան պատճառով նրանք ծնվեցին...

Արցախ, անուրդ տալիս աչքին առջեւ են գալիս այն գինվոր տղաները, ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն հայրենիքի՝ պահելով քո սահմաններն անառիկ: Որքան ծրագրեր ունեին նրանք. պիտի հետ գային, շենացեին հայրենի օջախները, շարունակեին այն գործերը, որոնք կիսատ էին թողել: Բայց, ավա՜ր, չիրականացան նրանց երազներները, եւ այդ ամենը մի չարաբաստիկ փամփուշտի պատճառով, որը կարծես մոռացել էր, թե ում ուղղությամբ է սլանում: Չնայած փամփուշտն ազգություն չի ճանաչում: Այդ փամփուշտն արծակողի ձեռքերը պիտի կտրել: Հենց նրա պատճառով մարեց ծովին այն օջախի, որի միակ զավակին բանակ էին ճանապարհել: Մոր աչքերը հավերժ մնացին արցունքոտ, իսկ հայրը, դառնացած աշխարհի ու Արարչի հանդեպ, չկարողանալով տանել միակ որդու կորուստը, կսկիծը սրտում մահացավ:

«Վեր կաց, հերոս՝ Քյարամ, հայրդ եկավ քեզ մոտ, որ գինվոր որդուց կարոտն առնի»:  
...երկու ամիս առաջ, այդ նույն սահմանի վրա, որտեղ կարմիր կակաչներն էին տարածվել, թշնամու գնդակը մեխվեց գինվորի թիկունքը: Տաք արյունը թափվեց հողին, շփվեց նրա հետ ու զգացին միմյանց ջերմությունը: Լացեց գինվորի ընկերը, արցունքներն ընկան այդ հողի վրա: Սեւ էին նրա արցունքները, ինչպես կակաչների սրտերը, որ սահմանի վրա էին: Նրանք միշտ կմնան սգավոր դրսից կարմիր, որ նայողին թվա, թե ուրախ են, ներսից՝ սեւ, որ թաքցնեն իրենց սրտում Հայոց աշխարհի վիշտը:

### Հայ գինվորի հիշատակին

- Քսան տարեկան չբոլորեցիր,
  - Հերոսի մահով կյանքը զոհեցիր:
  - Թիկունքդ դարձրիր սահմանի թուրքի,
  - Որ հայ ժողովուրդը միշտ խաղաղ ապրի:
- Արյունդ ներկեց հողը հայրենի,  
Պատկերդ մնաց սրտում շատերի:  
Շիրմիդ կայցելենք ամեն-ամեն օր,  
Ու չենք մոռանա սխրանքդ, գինվոր:

ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅԱՆ Սիսիան

## Նավթի եւ գազի պաշարներ կգտնվեն Սյունիքում

Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «ԱԳԱՊԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող Կապան համայնքի վարչական տարածքում նավթի եւ գազի պաշարների երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի առնչությամբ առաջին հանրային քննարկումը՝ մասնակցությամբ ընկերության ֆինանսական եւ ադմինիստրատիվ գծով տնօրեն Քրիստինե Վարդանյանի, ընկերության գլխավոր երկրաբան Դավիթ Խոնդկարյանի: Ք. Վարդանյանը նախ ներկայացրեց «ԱԳԱՊԵ» ընկերությունը, որ հիմնադրվել է 2017թվականի մարտին՝ գազի եւ նավթի երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու համար, հատկապես նավթի եւ գազի ոլորտում: Ընկերությունն արդեն արտոճագիր ունի հետախուզական աշխատանքներ իրականացնելու վայր մարզում: Նա նաեւ հայտնեց, որ Հայաստանի կառավարությունը հանրապետությունը բաժանել է վեց պայմանական տարածքի, եւ վեցերորդ տարածքը Սյունիքի մարզն է, ընդ որում միակ մարզն է, որ պայմանական տարածքը ներառում է ամբողջ մարզը: Առաջին փուլում լինելու են նախնական տվյալների հավաքում, քարտեզագրում, դաշտա-

յին աշխատանքներ: Դրան հաջորդելու է երկրորդ փուլը, ինչի շրջանակում իրականացվելու են սեսյանահետախուզական աշխատանքներ, որի ընթացքում մոտ 40 աշխատատեղ է ստեղծվելու: Բանախոսը մասնավորապես նշեց, որ սեսյանահետախուզական աշխատանքները շրջակա միջավայրին վնաս չեն հասնական: Այս փուլում տվյալների հավաքումից հետո հնարավոր կլինի որոշել, թե Սյունիքի մարզում հաշվարկային տարածքներ կա՞ն որոնողական-հետախուզական հորատանքներ անելու համար: Ծրագիրը ֆինանսավորում է կանադական ընկերությունը: «Սյունյաց երկրի» հարցին, թե նախնական տվյալներ կան Հայաստանի ընդերքում նավթա-յության մասին, Քրիստինե Վարդանյանը պատասխանեց, որ դեռեւս խորհրդային տարիներին նավթի եւ գազի պաշարների հայտնաբերման նպատակով հետախուզական-որոնողական աշխատանքներ են կատարվել Հայաստանում: Մասնավորապես 1997-98 թվականներին Գառնիում, այլ վայրերում հորատումներ են արվել, ամենահեռանկարային տվյալները, որ ստացել են Վայոց Ձորի մարզից է, իսկ Սյունիքի մարզը քիչ ուսումնասիրված է:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

**Այունյաց երկիր**

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴՊՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Գապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1210, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 13.02.2018թ.: